ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.09.2019
342-73

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
Արարարտ Միրզոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքի «Ընտրողների հետ աշխատանք» բաժնում նշված է, որ այդ էջի միջոցով այցելուն կարող է էլեկտրոնային նամակ գրել Ազգային ժողովի նախագահին, պատգամավորներին, հանձնաժողովներին և խմբակցություններին: Միաժամանակ տեքստում որպես ի գիտություն նշվում է. «Էլեկտրոնային տարբերակով ուղարկված նամակները չեն կարող համարվել պաշտոնական, դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության», իսկ պաշտնական նամակի համար առաջարկվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, 0095 Մարշալ Բաղրամյան 19 հասցեն:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տեղեկացնել, թե ինչ իրավական հիմքով է Ազգային ժողովը հրաժարվում էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունը համարել պաշտոնական, այն դեպքում, երբ Կառավարության 2015 թվականի 1204-Ն որոշման համաձայն Էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում դիմումը, հարցումը կամ բողոքը պետք է պարտադիր կարգով քննության առնվի:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան